02.06

4445

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Արամ Մեյմարյան

«20» 05 2026 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 066 - 26

Նախաձեռնող՝ ***Քաղաքացի Սերգեյ Հայրապետյան***
Գավառ բնակավայր, Լևիկ Հարությունյան փողոց 14 բնակելի տուն

Գործունեությունը՝ ***Բենզալցակայանի կառուցում***
Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ բնակավայրի Լևիկ Հարությունյան փողոց 14 բնակելի տուն

Առդիր՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 066 - 26

«20» 05 2026թ.

Քաղաքացի Սերգեյ Հայրապետյանի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ բնակավայրի Լևիկ Հարությունյան փողոց 14 բնակելի տուն հասցեում բենզալցակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	Քաղաքացի Սերգեյ Հայրապետյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք, Գավառ բնակավայր

Ներածական մաս. Համաձայն ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության /այսուհետ՝ հաշվետվություն/՝ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ բնակավայրի Լևիկ Հարությունյան փողոց 14 բնակելի տուն հասցեում նախատեսվում է գոյություն ունեցող շինությունը վերակառուցել բենզալցակայանի:

Գործունեությունն իրականացվելու է՝ 0.10646 հա տարածքում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ԳԱվառ բնակավայրի Լևիկ Հարությունյան փողոց 14 բնակելի տան հասցեում: Գործունեության տարածքը գտնվում է Գավառագետ գետի անմիջական հարևանությամբ:

Հեղուկ վառելիքի լցակայանի կառուցման աշխատանքային նախագիծն իրականացվել է 2024թ. մայիսի 24-ի N 052 նախագծային թույլտվության համաձայն, պատվիրատուի կողմից տրված առաջադրանքի և N22052024-05-0031 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի հիման վրա:

Համաձայն հաշվետվության՝ տեղում գոյություն ունեցող 2 հարկանի քարե բնակելի տունը նախատեսվում է վերակառուցել, կատարել ներքին միջնորմների փոփոխություն, ավելացնել արտաքին մուտքով մետաղական սանդուղք, երեսապատել որոշ հատվածներ՝ ըստ նախագծի ալյումինե կոմպոզիտե սալերով և կառուցել շվաքարան՝ լցակայանի համար: Նախատեսվում է հորերի պահեստ, տեղադրվելու է մեկ հեղուկ վառելիքի 2 ճկափողով

բաշխիչ աշտարակ և շինությանը կից պատերով փակված հատվածը ծածկվելու է պրոֆիլավոր ցինկապատ թիթեղով: Շվաքարանը նախատեվում է 2 ավտոմեքենայի կայանման համար, կառուցվածքը՝ մետաղական սյուներ: Նախատեսվում է կառուցել սանհանգույցներ, նաև սակավաշարժ խմբերի համար: Բոլոր շենքերը և շինությունները տեղակայված են լինելու վերը նշված հասցեում գտնվող 0.10646 հա մակերեսով հողամասում:

Փողոցին հարող տարածքում նախատեսվում է անվտանգության կանաչապատ կղզյակ՝ 1.5 մ լայնությամբ: Ավտոմեքենաների մուտքը և ելքը դեպի հեղուկ վառելիքի կայան իրականացվելու է Հ. Աբրահամյան փողոցից:

Տարածքի կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- շվաքարան՝ 69 .56 քմ,
- հեղուկ վառելիքի ստորգետնյա պահեստարան՝ 33.08 քմ, 25խմ,
- դիզելային վառելիքի տարա՝ 2 հատ 10 խմ,
- բենզին՝ 1 հատ 5 խմ,
- գոյություն ունեցող օժանդակ շինության (կաթսայատուն) մակերես՝ 2.7 քմ,
- գոյություն ունեցող շինության ընդհանուր մակերես՝ 244.2 քմ,
- գոյություն ունեցող պարիսպ՝ 8.4 քմ,
- կանաչապատման մակերես՝ 41.8 քմ,
- ծածկարանի բարձրությունը հողամասի ցածրագույն նիշից՝ 4.6 մ,

Ընդհանուր բարեկարգման մակերես՝ 664.86 քմ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է խոտածածկի տեսքով:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է օրենսդրության պահանջներին համապատասխան: Գնահատման և փորձաքննության գործընթացում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է երկու հանրային լսում՝ Գավառի համայնքապետարանում: Փորձաքննության գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության կոմիտեն, Գեղարքունիքի մարզպետարանը, Գավառի համայնքապետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննության գործընթացում Օրենքով սահմանված կարգով պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացվել են առաջարկություններ և դիտողություններ, որոնք ամփոփվել են և փորձաքննական կենտրոնի դիտողությունների ու առաջարկությունների հետ միասին ներկայացվել են նախաձեռնողին՝ հաշվետվությունը լրամշակելու նպատակով:

Նախաձեռնողի կողմից հաշվետվությունը լրամշակվել է թերի: Լրամշակված հաշվետվությունում չի ներկայացվել շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և դրանց կանխարգելման կամ նվազեցման միջոցառումները, մասնավորապես.

- չի ներկայացվել հարակից տարածքով անցնող Գավառագետից հեռավորությունը, շինարարության և շահագործման փուլերում գետի վրա հնարավոր ազդեցությունները և դրանք կանխարգելման կամ նվազեցման միջոցառումները,
- չեն ներկայացվել ստորգետնյա պահեստարանների գազային կուտակումների արտանետումները մեղմող միջոցառումները, ինչպես նաև օդափոխության համակարգի վերաբերյալ տեղեկատվությունը,
- ներկայացված չէ շահագործման փուլում գործունեության տարածքից ջրահեռացման համակարգերի տեղակայման վերաբերյալ տեղեկատվությունը, լուծումները, ինչը

սահմանված է առողջապահության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 1-ի N 21-Ն հրամանով:

Փորձաքննության գործընթացում, Օրենքի 17-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն, իրականացվել են տեղազննման աշխատանքներ՝ տարածքի փաստացի վիճակի և ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության համապատասխանությունը պարզելու նպատակով:

Տեղազննման աշխատանքների արդյունքում պարզվել է, որ առկա է անհամապատասխանություն փաստացի վիճակի և ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության միջև, մասնավորապես՝ բենզալցակայանն ամբողջությամբ կառուցված է, իրականացված է տարածքի բարեկարգում, սակայն որպես բենզալցակայան դեռևս չի գործում:

Համաձայն Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի գնահատումը և փորձաքննությունը կատարվում են մինչև նախատեսվող գործունեության իրականացումը:

Համաձայն Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ նախաձեռնողը պարտավոր է ապահովել ներկայացվող նյութերի ամբողջականությունը, հավաստիությունը և հիմնավորվածությունը:

Փորձաքննական եզրակացությունը կազմվել է հաշվի առնելով վերոնշյալ փորձաքննական հիմնավորումները և փորձաքննության գործընթացի արդյունքները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով վերոնշյալ հիմնավորումները՝ քաղաքացի Սերգեյ Հայրապետյանի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ բնակավայրիր Լևիկ Հարությունյան փողոց 14 բնակելի տուն հասցեում բենզալցակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Արմինե Վարդանյան